




ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԵՆ ՍՐԲԱԶԱՆ
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱԹՈՌԱԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ



70966

ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԲԱԲԳԵՆ Ս. ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՈՅ

ՄԵՐ ՍՈՒԳԸ

Բառ չունինք ողբալու համար զինքը. շուրաւ ինք լոկ այն մտածութեան առջեւ թէ ոչ եւս է նա մեզի հետ եւ ի գլուխ այն գործին, զոր այնքան մեծ արժանիքներով փառաւորեց:

Վիւսք, որով իր մահը ի խոր խոցեց Ազգն ու Եկեղեցին, կ'աղեկիզէ ամենէն աւելի նաեւ Ս. Աթոռոյս Հոգեւոր Պետը՝ որուն հետ մեծ կէս դարու սրակցութեամբ եղբայրացած էր հոգեւին, եւ բովանդակ Միաբանութիւնը, որուն անդամներէն շատերը աշակերտներն էին եղած իրեն, եւ մօտէն նանչցած իր բարձր ձիրքերը:

Մերոց Յակոբեանց առաւելական Ուխտը չի կրնար մոռնալ երախտիք, զոր ունեցաւ ան, աւելի քան հինգ տարիներ, այս նշանակալից յարկին տակ, իբրեւ կորստի գործակից անոր մեծ վերակազմողին՝ հոգեւոյս Տ. Եղիշէ Դուրեան Մերազան Պատրիարքի, իբրեւ մշակող Պատրիկ Կիւլպէնկեանի բարեբաւութեան, իբրեւ ուսուցիչ ժառանգաւորաց եւ Հնծայարանի, իբրեւ առաջին խմբագրապետ Սիմեոն Գոր Երջանին, իբրեւ քարոզիչ՝ որուն ձայնին արձագանգ տուին յանախ սրբավայրերուն կամարները, եւ իբրեւ եռանդուն եւ անխոնջ հոգեւորական, որ իր խօսովը, գործերովը եւ կեանքովը համբուն միտք բարի ազդեցութիւն գործեց Միաբանութեան, ժողովուրդին եւ ուխտաւորաց վրայ միանգամայն:

Կը վերահասինք Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհաճեմորհ Հայրապետին, որ կը կորսնցնէ անգին զօրավիգ մը, Մերազան Եպիսկոպոսաց դասուն եւ Դպրեվանոց նորակազմ Միաբանութեան, որոնք կը զրկուին քաջարթուն վերադիտող մը եւ գերազանց Հօրմէ մը, եւ Կիլիկեան թեմին բոլոր ժողովներուն եւ ժողովուրդեան, որոնք գիտենք թէ ամէնքն ալ ընկնուած են աղէտին զգացման ծանրութեան տակ. եւ ամէնուն, ինչպէս եւ մեզ համար միաժամանակ, կը մաղթենք երկնային մխիթարութիւն Ս. Հոգւոյն:

Այ՛ք յարսաստու՝ խոնարհած ենք իր մտածումին առջեւ, եւ կը պաղտանանք հոգեւորանոց սիրով որ Քաճառայապետն յաւիտենից օրհնէ նորա անունն ու յիշատակը, ի լոյս երեսաց իւրոց ընդունի նորա հոգին, եւ իր օրինակը կենդանի պահէ ընդ միտք առաջի աչաց մեր եւ ամէն անոնց, որոնք նուիրուած են ի ծառայութիւն Ս. Եկեղեցւոյ:

Յիշատակն արդարոց օրհնեալ յաւիտեան: